

Ապահով եղեք անտառային հրդեհների սեզոնի ընթացքում

California-ի անտառային հրդեհների սեզոնը սովորաբար տևում է հունիսից հոկտեմբեր: Ահա մի քանի խորհուրդներ, որոնք կօգնեն Ձեզ ապահով լինել:



Ի՞նչ են անտառային հրդեհները:

Անտառային հրդեհները բնական տարածքներում վերահսկողությունից դուրս բռնկվող հրդեհներ են: Դրանք կարող են շատ արագ տարածվել:

Գ Իմացեք նախազգուշացնող նշանները

- **Տարհանման նախազգուշացում**
Առկա է կյանքի և գույքի համար հնարավոր սպառնալիք: Գնացեք հիմա, եթե Ձեզ լրացուցիչ ժամանակ է պետք կամ ունեք տնային կենդանիներ:
- **Տարհանման հրաման**
Սա անհապաղ հեռանալու օրինական հրաման է, քանի որ կյանքին և գույքին անմիջական վտանգ է սպառնում:

Պատրաստվեք նախօրոք

Անտառային հրդեհի դեպքում պատրաստ եղեք հեռանալ ցանկացած պահի: Հավաքեք «ճամփորդական պայուսակ» կարևոր իրերով, ինչպիսիք են՝

- Ծննդյան վկայականներ, ինքնությունը հաստատող փաստաթղթեր (ID), անձնագրեր
- Կանխիկ գումար կամ վճարային քարտ
- Բջջային հեռախոսի լիցքավորիչ
- Կրակմարիչ
- Առաջին օգնության պարագաներ
- Դեղատոմսով նշանակված դեղեր
- Բժշկական տեղեկություններ (մարդկանց և կենդանիների մասին)
- N-95 պաշտպանիչ դիմակ
- Քնապարկեր
- Ջուր և չփչացող սնունդ

Հավելյալ տեղեկությունների համար այցելեք ready.gov/wildfires:

Մնացեք հանգիստ և անվտանգ

Անտառային հրդեհները կարող են խուճապ առաջացնել: Եթե իմանաք, թե ինչ անել, Դուք և Ձեր սիրելիները պատրաստ կլինեք արագ գործելու:



Անտառային հրդեհների ընթացքում

- Գտեք ապահով տեղ կամ ապաստարան
- Հետևեք տեղում տրվող հրամաններին
- Հաղորդագրություններ ուղարկեք ընտանիքի անդամներին և ընկերներին՝ թարմացումների մասին
- Տեղեկացեք, թե որտեղ են անտառային հրդեհները
- Ստուգեք Ձեր տարածքի օդի որակը
- Կանխեք դրսի օդի ներս մտնելը
- Մաքուր պահեք Ձեր տան տարածքը
- Փոշեկուլ մի օգտագործեք. դա կարող է մոխիր տարածել
- Հնարավորության դեպքում, օգտագործեք օդը մաքրող սարք
- Մի կերեք Ձեր այգուց հավաքած բերք, եթե դրսում ծուխ է



Անտառային հրդեհից հետո

- Մպասեք մինչև իշխանություններն ասեն, որ վտանգն անցել է՝ նախքան տուն գնալը
- Համոզվեք, որ Ձեր ջուրն անվտանգ է նախքան այն խմելը
- Զգուշացեք տաք մոխիրից, ածուխներից և բեկորներից
- Մոխիրը կարող է թունավոր լինել. հեռու պահեք երեխաներին և տնային կենդանիներին
- Անհրաժեշտության դեպքում, փոխարինեք դեղամիջոցները կամ սարքավորումները
- Լուսանկարեք ցանկացած պատճառված վնաս
- Ծանոթացեք հրդեհից հետո մաքրմանը վերաբերող նախագրուշական միջոցներին
- Փոխարինեք կորցրած փաստաթղթերը, օրինակ՝ ծննդյան վկայականները
- Խոսեք Ձեր բժշկի հետ առողջական ցանկացած խնդրի մասին
- Ստացեք հոգեկան առողջության աջակցություն, եթե դրա կարիքն ունեք



Blue Shield of California Promise Health Plan-ը պայմանագիր է կնքել L.A. Care Health Plan-ի հետ՝ Los Angeles վարչաշրջանում Medi-Cal-ի կառավարվող խնամքի ծառայություններ մատուցելու նպատակով: Կարող եք այս փաստաթուղթն անվճար ստանալ այլ ձևաչափերով, ինչպես օրինակ՝ խոշոր տպագիր, բրայլյան այբուբենով կամ աուդիո տարբերակով: Զանգահարեք (800) 605-2556 (TTY 711) հեռախոսահամարով, 08:00-ից մինչև 18:00-ը, երկուշաբթիից ուրբաթ: Հեռախոսագանգն անվճար է: Blue Shield of California Promise Health Plan is an independent licensee of the Blue Shield Association

Խտրականության բացառման ծանուցագիր
Ընկերությունը պահպանում է գործող նահանգային օրենքները և քաղաքացիական իրավունքների վերաբերյալ դաշնային օրենքները, ինչպես նաև խտրականություն չի դրսևորում, արհամարհում կամ վատ վերաբերվում մարդկանց՝ նրանց ռասայի, մաշկի գույնի, ազգային պատկանելության, էթնիկ խմբի ինքնության, առողջական վիճակի, գենետիկական տվյալների, ծագման, կրոնի, սեռի, ամուսնական կարգավիճակի, գենդերային ինքնության, սեռական կողմնորոշման, տարիքի, մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամության պատճառով: La compañía cumple con las leyes de derechos civiles federales y estatales aplicables, y no discrimina, ni excluye ni trata de manera diferente a las personas por su raza, color, país de origen, identificación con determinado grupo étnico, condición médica, información genética, ascendencia, religión, sexo, estado civil, género, identidad de género, orientación sexual, edad, ni discapacidad física ni mental. 本公司遵守適用的州法律和聯邦民權法律，並且不會以種族、膚色、原國籍、族群認同、醫療狀況、遺傳資訊、血統、宗教、性別、婚姻狀況、性別認同、性取向、年齡、精神殘疾或身體殘疾而進行歧視、排斥或區別對待他人。